# «ԼԱՎՈ» ՍՊԸ

ք.Երևան, Փ.Բուզանդի փող. 1/3, 6-րդ հարկ հեռ. (091) 56-12-22

lavollc@mail.ru

lavo.am




*ՊԵՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՔՊԼ 000479, 1-ին դաս*

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Տնօրեն Ա.Սահակյան

«31» մարտի 2025թ.

## ***ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*** *200-25*

***««ՀՀ Տավուշի մարզի Արճիս բնակավայրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքերի փանիքների հիմնանորոգում, ՀՀ Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, Արճիս բնակավայր, 11-րդ փողոց, 1-ին փակուղի հ.2 հասցեում» նախագծանախահաշվային փաստաթղթերի***

| | |
|---|---|
| ***ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ՝*** | ***«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՐՃԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ*** |
| ***ՆԱԽԱԳԾՈՂ՝*** | ***«ՏԱՎՈՒՇՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ*** |

*Նախագծման հիմքը՝ Տեխնիկական առաջադրանք*

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԱՍ

Փորձաքննության է ներկայացված ՀՀ Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, Արճիս բնակավայր, 11-րդ փողոց, 1-ին փակուղի հ.2 հասցեում գտնվող «ՀՀ Տավուշի մարզի Արճիս բնակավայրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքային նախագիծը:

Նախագծով նախատեսվում է ապամոնտաժել՝

Գլխավոր մասնաշենքի, մասնաշենք N2-ի, սպորտդահլիճի, միջանցք N1-ի և միջանցք N2-ի տանիքները, ինչպես նաև մուտքերի ծածկերը: Գլխավոր մասնաշենքի և Միջանցք N1-ի ալիքավոր տանիքածածկի ցինկապատ թիթեղի քանդում, փայտե կոնստրուկցիաների, գլխավոր մուտքի ծածկի, գլխավոր մասնաշենքի սալվածքի քանդում ամբողջ պարագծով: Մասնաշենք N2 -ի ասբոշիֆերից տանիքածածկի և փայտե կոնստրուկցիաների քանդում: Սպորտդահլիճի և միջանցք N2-ի ալիքավոր տանիքածածկերի ցինկապատ թիթեղից քանդում, փայտե կոնստրուկցիաների և մուտքի ծածկի քանդում:

Նախագծով նախատեսվում է բոլոր տանիքածածկերը իրականացնել քառալանջ, միջանցքներինը երկլանջ: Նախատեսվում է տանիքածածկերը իրականացնել պրոֆիլավոր ցինկապատ ԿՊ-25 0,55մմ թիթեղից: Փայտե կոնստրուկցիաներով, փայտե կավարամած և տախտակամածով, բոլոր տանիքածածկերում նախատեսվում է օդափոխության լուսամուտներ, ջրահեռացումը նախատեսվում է b=700մմ ջրհորդանի և ջրահեռացման խողովակների միջոցով: Նախատեսվում է անվտանգության ճաղաշար, ձնարգելիչներ:

Գլխավոր մասնաշենքի ամբողջ պարագծով նախատեսված է իրականացնել սալվածք: Մասմաշենք N2-ի մուտք դեպի տանիք նախատեսված է իրականացնել արտաքին մետաղական աստիճանով, միջանցք N2-ը նույնպես արտաքին մետաղական աստիճանով մինչև սպորտդահլիճի տանիք:

Նախագիծը կատարված է համաձայն առաջադրանքի և գործող շին. նորմերին ու կանոններին համապատասխան:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ չկան: Այն երաշխավորվում է համաձայնեցման:

## ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՄԱՍ

Փորձաքննության է ներկայացված ՀՀ Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, Արճիս բնակավայր, 11-րդ փողոց, 1-ին փակուղի հ.2 հասցեում գտնվող «ՀՀ Տավուշի մարզի Արճիս բնակավայրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների նախահաշվի գնահաշվարկը:

Ըստ կատարված ուսումնասիրության, նախահաշիվները կազմված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն՝ նախագծային ծավալների հիման վրա:

Աշխատավարձի և մեքենաների շահագործման արժեքները հաշվարկված են 1984թ. գնահաշվարկով և վերահաշվարկված են 2023թ. գներով ընդունելով 1ռ=2320.92՝ աշխատավարձի մասով, 1ռ=3211.29՝ մեքենա-շահագործման մասով:

Շին. նյութերի արժեքը վերցված է ՀՀ ֆինանսների նախարարության՝ 2023թ. դեկտեմբեր ամսվա ինֆորմացիոն տեղեկագրից: Այն շին.նյութերի, սարքավորումների արժեքները, որոնք բացակայում են ինֆ. տեղեկագրից, կապալառու կազմակերպությունը պետք է ներկայացնի համապատասխան հաշիվ ապրանքագրեր:

Նյութերի արժեքների վրա կիրառված է՝

- 13.2% տրանսպորտային ծախսեր,
- 5% նորմերում չնախատեսված այլ նյութերի ծախսեր,
- 2% պահեստավորման ծախսեր:

Ուղղակի ծախսերի վրա տրված է՝

- 13.3% վերադիր ծախսեր,
- 11% շահույթային ծախսեր:

Ըստ հավաք նախահաշիվների լիմիտավորված տոկոսադրույքների, ընդհանուր նախահաշվային արժեքը կազմում է. ***48 018.295 հազ. դրամ***, այդ թվում ԱԱՀ ***8 003.050 հազ. դրամ.***

Ըստ սույն փորձաքննության՝ շինարարության ընդհանուր արժեքը՝ ***48 018.295 հազ. դրամ*** երաշխավորվում է հաստատման:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*«Լավո» ՍՊԸ փորձաքննությունը երաշխավորում է ««ՀՀ Տավուշի մարզի Արճիս բնակավայրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնաշենքերի փանիքների հիմնանորոգում, ՀՀ Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, Արճիս բնակավայր, 11-րդ փողոց, 1-ին փակուղի հ.2 hասցեում» նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:*

*ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ՝* *Կ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

*Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆ*